

<<Լորդ-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև, Լիզինգառու, մի կողմից, <<ԱՅ ԷՍ ԱՅ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ռ. Պողոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև, Վաճառող մյուս կողմից, և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև <<Գևորգ-լիզինգատու>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Լիզինգառուին հանձնել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, եթե այն համապատասխանում է Պայմանագրով սահմանված բնութագրին, (այսուհետև՝ նաև ապրանք), Լիզինգառուն պարտավորվում է ընդունել ապրանքը, իսկ Գևորգ-Լիզինգատուն պարտավորվում է վճարել դրա համար Վաճառողին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Լիզինգառուն և/կամ Գևորգ-լիզինգատուն իրավունք ունեն՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագրի կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գևորգ-լիզինգատուն Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Գևորգ/Լիզինգատուի նախնական գրավոր համաձայնությամբ լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Լիզինգատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Լիզինգառուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում վճարել լիզինգի պայմանագրով վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ այդ պայմանագրով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսակնու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.4.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Գնորդ-լիզինգատուն պարտավոր է՝

2.3.1 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Վաճառողն իրավունք ունի՝

2.4.1 Լիզինգատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.4.2 Գնորդ-լիզինգատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Լիզինգատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.4.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդ-լիզինգատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.4.3.1 Գնորդ-լիզինգատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.4.4 Լիզինգատուի և Գնորդ-լիզինգատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.5 Վաճառողը պարտավոր է՝

2.5.1 Լիզինգատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.5.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան Լիզինգատուի և/կամ Գնորդ-լիզինգատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.5.3 Լիզինգատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.5.4 Լիզինգատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Լիզինգատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.5.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.5.6 Հետ տանել Լիզինգատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.5.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.5.8 Լիզինգատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.5.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո թե՛ Գնորդ-լիզինգատուին, թե՛ Լիզինգատուին հատուցել վերջիններիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.5.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել թե՛ Գնորդ-լիզինգատուին, թե՛ Լիզինգատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 187 392 000 (մեկ հարյուր ութսունյոթ միլիոն երեք հարյուր ինսուններկու հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները, ակնկալվող շահույթը, ինչպես նաև լիզինգի սպասարկման գինը և Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Լիզինգատուին հանձնելու գինը, ընդ որում.

Չափա- բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ընդհանուր գինը ՀՀ դրամով /տառերով և թվերով/
1	2	5=3+4
1	Լիզինգով Սրտի ուլտրաձայնային հետազոտման համակարգի ձեռքբերում	187 392 000 մեկ հարյուր ութսունյոթ միլիոն երեք հարյուր ինսուններկու հազար
	Լիզինգի առարկայի գնման գին	152 967 000 մեկ հարյուր հիսուններկու միլիոն ինը հարյուր

		վաթսուներեք հազար
	Լիզինգի սպասարկման գին (տոկոսագումար)	33 500 000 երեսուներեք միլիոն հինգ հարյուր հազար
	Լիզինգի առարկայի ապահովագրության գին	920 000 ինը հարյուր քսան հազար
	Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Լիզինգառուին հանձնելու գին	5 000 Հինգ հազար

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և **Վաճառողն** իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ **Լիզինգատունն** կամ **Գնորդ-լիզինգատունն** նվազեցնելու այդ գինը:

3.2 **Գնորդ-լիզինգատունն** մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները **Վաճառողի** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով:

3.3 **Լիզինգատունն** իրեն հանձնված ապրանքի ժամանակավոր օգտագործման և տիրապետման դիմաց **Գնորդ-լիզինգատունին** վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները **Գնորդ-լիզինգատունի** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն միմյանց միջև կնքվելիք **լիզինգի պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող վճարման ժամանակացույցի**:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 **Վաճառողը** երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում **Լիզինգատունի** կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա **Վաճառողը** պարտավոր է իր հաշվին, **Լիզինգատունի** կողմից սահմանված ռոջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է **Լիզինգատունի** և **Վաճառողի** միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը **Լիզինգատունին** հանձնելու փաստը ֆիքսվում է **Լիզինգատունի** և **Վաճառողի** միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ապրանքի հանձնման-ընդունման ակտի կնքման պահից ապրանքը համարվում է **Գնորդ-լիզինգատունի** կողմից **Լիզինգատունի** ժամանակավոր օգտագործմանը և տիրապետմանը հանձնված:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ **Վաճառողը** **Լիզինգատունին** է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը **Լիզինգատունին** հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում **Վաճառողը** հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, **Լիզինգատունն** պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով **Վաճառողին** է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա **Լիզինգատունն** չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով **Վաճառողին** հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում **Լիզինգատունն** ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և **Վաճառողի** նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում **Լիզինգատունն** չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը **Լիզինգատունն** էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով **Վաճառողին** է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 **Վաճառողը** պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 **Վաճառողի** կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում **Վաճառողից** յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում **Վաճառողից** զանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են **Վաճառողին** վճարման ենթակա գումարների հետ:

6.5 **Գնորդ-լիզինգատուի** կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար **Գնորդ-լիզինգատուի** նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Սույն գլխի դրույթները կիրառման ենթակա չեն **Լիզինգատուի** և **Լիզինգատուի** միջև պայմանագրային իրավահարաբերությունների նկատմամբ:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագիրը կնքվելուց հետո **Գնորդ-լիզինգատուի** և **Լիզինգատուի** միջև կնքվում է՝ լիզինգի պայմանների վերաբերյալ պայմանագիր, որով կարգավորվում են լիզինգին վերաբերվող բոլոր պայմանները(ընդ որում դրանք չպետք է տարբերվեն Մասնակցի կողմից ներկայացված և բավարար գնահատված լիզինգի պայմաններից):

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, **Վաճառողը** ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցի ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո **Գնորդ-լիզինգատուն** և **Լիզինգատուն** համատեղ որոշմամբ կարող են միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, **Գնորդ-լիզինգատուն** և **Լիզինգատուն** չեն կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով **Վաճառողի** համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով **Գնորդ-լիզինգատուի** և **Լիզինգատուի** կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձևերի բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ **Վաճառողի** առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ **Լիզինգատուի** մոտ չի վերացել

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

ապրանքի օգտագործման պահանջը, իսկ **Վաճառողի** առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում **Վաճառողի** կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է **Վաճառողը**:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 **Վաճառողի** կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը **Լիզինգատուն** հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: **Վաճառողը**, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը **Լիզինգատուն** այն ուղարկվում է նաև **Վաճառողի** էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԼԻԶԻՆԳԱՏՈՒՆ <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ ք. Երևան, Արմենակյան 108/4 ՀՎՀՀ 01508793 <<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ Հ/Հ 1150001612200100 	ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒՆ «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ ք. Երևան, Ֆուլիկի 1/1, 288-289 տարածքներ 3433 02567702 «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Հ/Հ 220009620224000 	ՎԱՃԱՌՈՂ <<ԱՅ ԷՍ ԱՅ>> ՍՊԸ ք. Երևան, Փ. Բուզանդի փ. 107շ. 6րն. հեռ. 091-55-66-42 ՀՎՀՀ 02874743 ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ Հ/Հ 2500011575600100 Isillc.gnumner@gmail.com, rita.poghosyan72@gmail.com տնօրեն Ռ. Ղոբազյան 
--	---	--

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

hh	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման առարկայի անվանումը	մատակարարման		
			հասցեն	ենթակաքանակը	Ժամկետը
6	33111350	Լիզինգով Սրտի ուլտրաձայնային հետազոտման համակարգի ձեռքբերում	ք.Երևան, Ա. Արմենակյա 108/4	1 հավաքածու	Սույն գնման պայմանագրի և լիզինգի պայմանների մասին պայմանագրի կնքման օրվանից հաջված 120 օրվա ընթացքում:
		Լիզինգի առարկայի գինը	152 967 000 մեկ հարյուր հիսուներկու միլիոն ինը հարյուր վաթսույնոթ հազար		
		Լիզինգի սպասարկման գինը	33 500 000 երեսուներեք միլիոն հինգ հարյուր հազար		
		Լիզինգի առարկայի ապահովագրության գինը	920 000 ինը հարյուր քսան հազար		
		Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը	5 000 Հինգ հազար		

Չափաբաժին 6

h/h	Չափաբաժնի անվանումը	Առաջարկվող ապրանքի
		Լիզինգի առարկայի Ապրանքային նշանը, մոդելը և արտադրողը
6	Լիզինգով Սրտի ուլտրաձայնային հետազոտման համակարգի ձեռքբերում	Philips, Affiniti 1. Philips Affiniti 70 Ultrasound system 2. Philips Affiniti CVx 3. Philips Affiniti CVx 4. Philips Affiniti CVx 3D Edition

Լիզինգով Սրտի ուլտրաձայնային հետազոտման համակարգի ձեռքբերում

Ելնելով կիրառման հնարավորությունից և արդյունավետությունից, ստորև ներկայացված բոլոր 4 սարքավորումները իրենց լրակազմերով հանդերձ նույն արտադրողին են, տվյալները փոխադարձ փոխարինելի են, սարքավորումները համատեղելի են կենտրոնում առկա ծրագրային համակարգի հետ, ուստի ամբողջը միասին հանդիսանում է մեկ չափաբաժին:

Ապրանքը Philips Եվրոպական/Ամերիկյան, արտադրության են:

Երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս տեղակայումից հետո:

Սարքի տեղադրումը, թողարկումը, ԲԿ-ի տեխնիկական մասնագետի ուսուցումը կիրականացվի արտադրողի կողմից արտոնագրված մասնագետի կողմից՝ մեր միջոցներով:

1) Ուլտրաձայնային համակարգ ընդհանուր հետազոտությունների համար չորս տվյալներով 1 լրակազմ Philips Affiniti 70 Ultrasound system

Գիրառության ոլորտները. Առկա են բոլորը Affiniti 70G

Որովայնի խոռոչի հետազոտություններ, փոքր օրգաններ և մակերեսային կառուցվածքներ, Մկանային-կմախքային համակարգ, Մանկաբարձություն, Գինեկոլոգիա, Հնդհանուր պատկերագրություն մանկաբուժության մեջ, Ուրոլոգիա, Մեծահասակների էխոկարդիոգրաֆիա, Երեխաների էխոկարդիոգրաֆիա, Պտղի էխոկարդիոգրաֆիա, Անոթային հետազոտություններ, այդ թվում՝ տրանսկրանիալ Դոպլերոմետրիա, Մեծահասակների տրանսկրանիալ փոփոխություններ, Երեխաների և նորածինների տրանսկրանիալ փոփոխություններ: Առանձին պատվերով հնարավոր է համալրում՝ մասնագիտացված ծրագրային ապահովում իրական ժամանակում ծավալային

սկանավորման համար, այդ թվում՝ գունավոր Դոպլեր ռեծիմով տրանսկերակրափողային և տրանսթորակալային միաբյուրեղային մատրիցային տվիչների օգտագործմամբ:

Ֆունկցիաները և ծրագրային փաթեթները. Առկա են բոլորը՝ Core Bundle; Cardiology Clinical; Smart Exam; Auto Doppler; CV Auto Measure; AutoStrain LV

Հետազոտությունների տեսակները պարտադիր.
Որովայնի հետազոտություններ,
Փոքր օրգաններ և մակերեսային կառուցվածքներ,
Մկանային-կմախքային համակարգ,
Մանկաբարձություն,
Գինեկոլոգիա,
Ընդհանուր պատկերագրություն մանկաբուժության մեջ,
Ուրոլոգիա,
Մեծահասակների էխոկարդիոգրաֆիա,
Երեխաների էխոկարդիոգրաֆիա,
Պտղի էխոկարդիոգրաֆիա,
Անոթային հետազոտություններ, ներառյալ տրանսկրանիալ դոպլերոգրաֆիա,
Բիոպսիայի մասնագիտացված ծրագիր,
Մասնագիտացված ծրագիր՝ միաբյուրեղային սենսորների աջակցության համար,
Հյուսվածքների շեղումների շտկման մասնագիտացված ծրագիր՝ ուլտրաձայնային ալիքի արագության ավտոմատ շտկում,

Լիաեկրան ուլտրաձայնային պատկերի սկանավորման նվիրված ռեծիմ, որը ակտիվանում է սենսորային կառավարման վահանակի վրա գտնվող հատուկ կոճակով,

Մասնագիտացված ծրագիր՝ ուսումնասիրություն կատարելու ավտոմատացված քայլ առ քայլ սցենարի համար. անհրաժեշտ ռեծիմի և վիզուալիզացիայի պարամետրերի ավտոմատ ակտիվացում, ուսումնասիրության հաջորդ քայլին անցում, պատկերների մեկնաբանություններ, չափումների մեկնարկ և հաշվետվության ուղարկում:

Ձախ փորքի տարածաշրջանային կծկվող ֆունկցիայի, միոկարդի դեֆորմացիայի աստիճանի ոչ Դոպլերային ավտոմատ որակական և քանակական գնահատման մասնագիտացված ռեծիմ,

Միոկարդի պրոյեկցիայի և սահմանների ավտոմատ ճանաչում,
Միոկարդի սահմանների ավտոմատ ճանաչում երեք ապիկալ ելուստներում միաժամանակ,
Ստեղծել մանրամասն հաշվետվություններ, որոնք ցույց են տալիս LV-ի մակերեսը, ծավալը և լրացուցիչ պարամետրերը,

Երկայնական միոկարդի դեֆորմացիայի 18-հատվածանոց ցլի աչքի դիագրամի կառուցում,
Մասնագիտացված ծրագիր՝ ձախ փորքի զլոբալ և տարածաշրջանային երկայնական լարվածության ավտոմատ գնահատման համար՝ օգտագործելով բծավոր հետևման մեթոդը՝ արտամղման ֆրակցիայի միաժամանակյա ավտոմատ հաշվարկով,

Արհեստական բանականության վրա հիմնված մասնագիտացված ծրագիր՝ միոկարդի ներքին և միջին շերտերի դեֆորմացիայի առանձին գնահատման համար՝ օգտագործելով բծերի հետևման մեթոդը,

Սրտաբանության մեջ ավտոմատ քանակական տվյալների վերլուծության մասնագիտացված ծրագիր.
--Սրտի երկչափ պատկերների վրա ավտոմատ սրտաբանական չափումներ՝ ձեռքով ուղղման հնարավորությամբ,
-- Դոպլերի սպեկտրի պարամետրերի ավտոմատ չափում՝ ձեռքով կարգավորման հնարավորությամբ,
Անոթային հետազոտությունների ընթացքում կառավարման ծավալի, մասշտաբի և բազային զծի դիրքի և անկյան ավտոմատ կարգավորման, ինչպես նաև հոսքի ավտոմատ օպտիմալացման համար նախատեսված հատուկ ծրագրային ապահովում.

-- Ավտոմատ հոսքի հետևում,
-- Ավտոմատ անկյան ուղղում՝ հաշվի առնելով կառավարման ծավալի շարժը,
-- Ավտոմատ կերպով կարգավորում է գունային քարտեզագրման պատուհանի դիրքը և անկյունը,
Մասնագիտացված ծրագրային մոդուլ DICOM ձևաչափի աջակցության համար (տպագրություն, պահպանում, ծանուցում, սարքի աշխատանքային ցանկ և կառուցվածքային հաշվետվությունների ստեղծում):

Համակարգի կազմը Առկա են

Էլեկտրոնային միավոր մոնիտորի եւ կառավարման վահանակի հետ՝ պարտադիր; Առկա է Ուլտրաձայնային տվիչներ ըստ ընտրության՝ մոնոբյուրեղային, Էլեկտրոնային կոնվեքս, գծային, փուլավորված / ֆազային/ սեկտորային, ներխորձային, մատրիցային ներկերակրափողային և տրանստորակալ, մեծահասակներ, երեխաների և նորածնային, ներվիրահատական;

Էլեկտրասնուցման մալուխ պարտադիր; Առկա է Շահագործման ձեռնարկ ռուսերեն՝ պարտադիր; Առկա է

Լրացուցիչ պարտադիր գործիքներ.

ԷՍԳ սինքրոնացման մալուխ: Առկա է

Սկանավորման ռեծիմները Առկա են բոլորը

B-ռեծիմ; M-ռեծիմ;

Կեղծ ուռուցիկ սկանավորում B-ռեժիմում գծային տվիչի օգտագործմամբ;
Տարածական կոմպլեքսավորում / compounding/;
Երկրորդ /հյուսվածքային/ հարմոնիկի ռեժիմ THI;
Խմպուլսային- ալիքային Doppler PW;
CW հաստատուն-ալիքային Doppler;
Բարձր կրկնության խմպուլսային (HPRF) ռեժիմ;
CFM գունավոր դոպլեր;
Էներգետիկ Դոպլեր /Power Doppler/;
Ուղղորդված էներգետիկ դոպլեր /Directional PD/;
Իրական ժամանակում տրիպլեքս ռեժիմ;
Բազմաճառագայթային ռեժիմ / Multibeam/;

Պատկերների ձևավորում Առկա են բոլորը

Ակուստիկ ճառագայթման հզորության կարգավորում մոնիտորի էկրանին արժեքների ցուցադրմամբ;
Ընդունվող ազդանշանների ուժեղացման կարգաբերում՝ մոնիտորի էկրանին արժեքները ցուցադրելով;
Ազդանշանների դինամիկ կիզակետում ընդունման ընթացքում;
Դինամիկ ապերտուրա ճառագայթման եւ ընդունման ընթացքում;
Ճառագայթման եւ ընդունման ապոդիզացիա;
Հաճախականության կոմպլեքսավորում / compounding/;
Դինամիկ գտում սկանավորման խորությամբ;
Կիսատոն պատկերի կեղծ գունավորում;
Սառեցված պատկերի վիզուալիզացիայի պարամետրերի փոփոխում (հետմշակում);
Դոպլերի սպեկտրի ավտոմատ հետևում և արյան հոսքի պարամետրերի ավտոմատ չափում;
Պատկերի պտույտ եւ հակադարձում;
Պատկերի եզրագծի ընդգծման գտիչ;
Պատկերի հարթեցում;
Գամմա կորեկցիայի կառավարում:

Չափումներ

Չափումների տարբերակներ. Առկա են բոլորը

Հետազոտությունների ընթացքում;
Կինոօղակի հիշողությունից;
Պահպանված ֆայլերից:

Չափումներ B-ռեժիմում. Առկա են բոլորը

Հեռավորություն, տարածք, ծավալ, անկյուն, գծային հարաբերակցություն, տարածքի հարաբերակցություն, աստիճան:

M-ռեժիմի չափումներ Առկա են բոլորը

Հեռավորություն, արագություն, ժամանակային ընդմիջում, սրտի կծկում, արագացում, վերելքի/անկման ժամանակը:

Չափումներ սպեկտրալ Դոպլերի ձայնագրման ռեժիմում. Առկա են բոլորը

Գծային արագություն, միջին արագություն, ժամանակային ընդմիջումներ, դիմադրության ինդեքս, խմպուլսացիայի ինդեքս, ճնշման գրադիենտ, սրտի ռիթմ, իրական ժամանակում ավտոմատ դոպլեր սպեկտրի հետապնդում, իրական ժամանակում ավտոմատ դոպլեր սպեկտրի հաշվարկ

Պատկերի ձևավորման պարամետրեր

Ճառագայթման ֆոկուսային տարածքի սկանավորման խորության դիրքերի քանակը՝ 8;
Հնարավորությունը թեք ուլտրաձայնային սկանավորման, երբ ուսումնասիրվում է գծային զոնդով Doppler ռեժիմներում, աստիճաններով՝ 20;
Ընդունող եւ փոխանցող ուղիների քանակը 4.718 .592;
Դինամիկ միջակայք, dB,՝ 280;
Կադրերի առավելագույն արագությունը՝ 1900 կադր/վրկ;
Խմպուլսների կրկնության հաճախականության (PRF) միջակայքը խմպուլսային ալիքային Դոպլերի ռեժիմում PW, kHz,՝ 1-26 ;
Դոպլերային սկանավորման ժամանակ խմպուլսների կրկնության հաճախականության (PRF) միջակայքը CFM ռեժիմում, կՀց,՝ 0,150-20;

Խմպուլսային ալիքային դոպլեր ռեժիմում չափված արագությունների միջակայքը PW, սմ/վ,՝ 2,3-830;

CFM գունավոր Doppler սկանավորման ռեժիմում չափված արագությունների միջակայքը, մ / վրկ,՝ 0,013-3,08;

Ստուգման ենթակա ծավալի փոփոխության միջակայքը խմպուլսային ալիքային Դոպլեր ռեժիմում PW, սմ,՝ 0,5-20;

Առավելագույն չափվող արագությունը CW անընդհատ ալիքի Doppler ռեժիմում, մ/վ,՝ 28;

Համակարգի լրիվ հաճախականության տիրույթը՝ ՄՀց,՝ 1-22;

Սկանավորման առավելագույն խորությունը,՝ 40սմ;

Իրական ժամանակում պատկերի խոշորացում (ակուստիկ խոշորացում),՝ 16;

Պատկերի խոշորացում սառեցման ռեժիմում (PAN-zoom),` 16;
Մոխրագույն սանդակ` 256;
Կինոօղակ, կադրերի քանակը` 2200:

Հիմնական միավորի դիզայնի բնութագրերը եւ պարամետրերը

Բարձր լուծանելիության գունավոր LCD մոնիտոր` հակաշողացող ծածկույթով. Առկա է
Անկյունագիծը` 21,5 դյույմ;
Լուծանելիությունը` 1920x1080 պիքսել:

Մուտքագրման սարքեր. Առկա են

Ֆունկցիոնալ ստեղնաշար;

Կառավարման վահանակ, անկյունագիծը 12 դյույմ;

Համակարգի կառավարման վահանակի ուղղահայաց կարգավորում` 20,3 սմ;

Համակարգի կառավարման վահանակի կարգավորում հորիզոնական հարթությունում, պտույտը` +/-180 աստիճան:

Միակցման վարդակներ /պորտեր/

Պատկերային տվիչների միացման համար պորտերի քանակը` 4 հատ:

Քաշը և չափսերը

Լայնությունը` 57.2 սմ;

Բարձրությունը կարգավորվող` 140-165 սմ. տիրույթում է;

Խորությունը` 98,3 սմ.;

Քաշը` 83,6 կգ.:

Մատակարարման լրակազմը.

Վերը նշված բոլոր սարքերը, մոդուլները և ծրագրային փաթեթները; Առկա են

Մոնոբյուրեղային փուլային սեկտորային տվիչ մեծահասակների սրտի, որովայնի, տրանսկոանիալ եւ մանկական սրտաբանության համար` S5-1 Transducer

Աշխատանքային հաճախականության տիրույթը` 1-5 ՄՀց;

Բացվածքի աշխատանքային մակերեսույթի զծային չափը` 20,3 մմ,

Տարրերի քանակը` 80;

Սկանավորման անկյունը` 90 աստիճան

Ներթափանցման խորությունը B-ռեժիմում` 30 սմ.;

Փուլային սեկտորային տվիչ մեծահասակների, մանուկների և պտղի սրտի, մանուկների որովայնային և ներյոսոնոգրաֆիայի համար` S8-3 Transducer

Աշխատանքային հաճախականության տիրույթը` 3-8 ՄՀց;

Բացվածքի աշխատանքային մակերեսույթի զծային չափը` մմ, 15,4

Տարրերի քանակը` 96;

Սկանավորման անկյունը, աստիճան, 90

Ներթափանցման խորությունը B-ռեժիմում` 30 սմ.;

Գծային տվիչ անոթների , մակերեսային օրգանների, մկանային-կմախքային համակարգերի, համար` L12-3 ERGO Transducer

Աշխատանքային հաճախականության տիրույթը, 3-12 ՄՀց;

Բացվածքի աշխատանքային մակերեսույթի զծային չափը` մմ, 38

Տարրերի քանակը` 160;

Ներթափանցման խորությունը B-ռեժիմում` 140 մմ.;

Գծային ներվիրահատական սենսոր` մակերեսային անոթների, փոքր օրգանների, մկանային-կմախքային համակարգի համար` L15-7io Transducer

Աշխատանքային հաճախականության տիրույթը` 7-15 ՄՀց;

Բացվածքի աշխատանքային մակերեսույթի զծային չափը` մմ, 23

Տարրերի քանակը` 128;

Ներթափանցման խորությունը B-ռեժիմում` 70 մմ.;

Դիզայնը` շարժական, ամրակայվող անիվներերով Առկա է

Նորմատիվային աշխատանքային ռեսուրսը` 10 տարի

Էլեկտրասնուցումը ստանդարտ, էլեկտրական ցանցից 220Վ., 50 Հց, ցանցից սպառող հզորությունը` 450 ՎԱ:

2)Ուլտրաձայնային համակարգ սրտաբանական հետազոտությունների համար մեկ տվիչով 1 լրակազմ՝
Philips Affiniti CVx

Կիրառության ոլորտները. Առկա են բոլորը

Որովայնի հետազոտություններ; ընդհանուր պատկերումներ մանկաբուժության մեջ; մեծահասակների, մանկական և պտղի էխոկարդիոգրաֆիա; անոթային հետազոտություններ, այդ թվում՝ տրանսկրանիալ դոպլեր; տրանսեզոֆագեալ հետազոտություններ մեծահասակների, երեխաների և նորածինների: Առանձին պատվերով հնարավոր է համալրում՝ մասնագիտացված ծրագրային ապահովում իրական ժամանակում ծավալային սկանավորման համար, այդ թվում՝ գունավոր Դոպլեր ռեժիմով տրանսկերակրափողային և տրանսթորակալային միաբյուրեղային մատրիցային տվիչների օգտագործմամբ :

Ֆունկցիաները և ծրագրային փաթեթները. Առկա են բոլորը՝ CV Performance Plus Bundle

Մեծահասակների էխոկարդիոգրաֆիա պարտադիր՝ Առկա է
Անոթային հետազոտություններ, այդ թվում՝ տրանսկրանիալ Դոպլեր;
Մասնագիտացված բիոպսիայի ծրագիր;
Մասնագիտացված ռեժիմ լրիվ էկրանով միայն ուլտրաձայնային սկանավորման պատկերի, որն ակտիվացվում է սենսորային էկրանի կառավարման վահանակի հատուկ ստեղնակնճակով;
Մասնագիտացված ծրագիր հյուսվածքային արերացիայի ավտոմատ կորեկցիայի-ուլտրաձայնային ալիքների տարածման արագության կորեկցիա;
Մասնագիտացված ծրագիր իրական ժամանակում սրտի ցուցադրման եւ սահմանների ճանաչման բարելավման համար, որը ակտիվացվում է նվիրված կոճակով;
Մասնագիտացված ծրագիր՝ հետազոտություններ կատարելու ավտոմատացված քայլ առ քայլ սցենարի համար. անհրաժեշտ ռեժիմի և վիզուալիզացիայի պարամետրերի ավտոմատ ակտիվացում, ուսումնասիրության հաջորդ քայլին անցում, պատկերների մեկնաբանություններ, չափումների մեկնարկ և հաշվետվության ուղարկում::

Մեծահասակների սրտաբանական ծրագրային փաթեթներ պարտադիր՝ Առկա են բոլորը՝ AutoStrain LA/RV Bundle
Ձախ փորոքի տարածաշրջանային կծկվող ֆունկցիայի, միոկարդի դեֆորմացիայի աստիճանի ոչ Դոպլերային ավտոմատ որակական և քանակական գնահատման մասնագիտացված ռեժիմ;
Միոկարդի պրոյեկցիայի եւ սահմանների ավտոմատ ճանաչում;
Միոկարդի սահմանների ավտոմատ ճանաչում միաժամանակ երեք զագաթային պրոյեկցիաներից;
Մանրամասն հաշվետվությունների գեներացում, որոնք ցույց են տալիս ձախ փորոքի տարածքը, ծավալը եւ հավելյալ պարամետրերը;
Միոկարդի երկայնական դեֆորմացիայի 18 սեգմենտից բաղկացած “ցուլի աչքի” սխեմայի կառուցում;
Մասնագիտացված ծրագիր՝ ձախ փորոքի զլոբալ և տարածաշրջանային երկայնական լարվածության ավտոմատ գնահատման համար՝ արտամոդան ֆրակցիայի միաժամանակյա ավտոմատ հաշվարկով;
Արհեստական բանականության վրա հիմնված մասնագիտացված ծրագիր՝ միոկարդի ներքին եւ միջին շերտերի դեֆորմացիայի առանձին գնահատման համար;
Արհեստական բանականության վրա հիմնված մասնագիտացված ծրագիր՝ սրտի պատի շարժման ավտոմատացված գնահատման համար՝ շրջանաձև դիագրամի կառուցմամբ;
Արհեստական բանականության հիման վրա ձախ փորոքի զլոբալ երկայնական դեֆորմացիայի գնահատման համար օպտիմալ տվյալների հավաքածուի ավտոմատ ընտրության հատուկ ծրագիր;
Ձախ նախասրտի կծկման ֆունկցիայի, դեֆորմացիայի աստիճանի ոչ Դոպլերային ավտոմատ որակական և քանակական գնահատման մասնագիտացված ծրագիր;
Միոկարդի սահմանների ավտոմատ ճանաչում;
Ձախ նախասրտի դեֆորմացիայի հաշվարկ ռեգերվուարային փուլում;
Ձախ նախասրտի դեֆորմացիայի հաշվարկ կոնդուիտային փուլում;
Ձախ նախասրտի դեֆորմացիայի հաշվարկ կոնտրակտիլային փուլում;
Աջ փորոքի կծկվող ֆունկցիայի, դեֆորմացիայի աստիճանի ոչ Դոպլերային ավտոմատ որակական և քանակական գնահատման մասնագիտացված ծրագիր;

Սթրեսային էխոկարդիոգրաֆիայի մասնագիտացված ծրագիր. Առկա են բոլորը՝ բոլորը՝ CV Performance Plus Bundle

- Ֆիզիկական բեռնվածության ստանդարտ արձանագրություն,
- Դեղաբանական բեռնվածության ստանդարտ արձանագրություն,
- Հեծանիվով ֆիզիկական բեռնվածության ստանդարտ արձանագրություն,
- Արձանագրությունների դադարեցում/շարունակում,
- Արձանագրության ընթացքում փուլերի եւ կանխատեսումների վերանվանում, ջնջում և ավելացում,
- Աջակցվող բեռնման փուլերի քանակը՝ 10 հատ:

2D ռեժիմով ընդհանուր վիզուալիզացիայի քանակական վերլուծության մասնագիտացված ծրագիր. Առկա են բոլորը՝ CV Doppler and 2D Auto Measure;

- Դինամիկ վերլուծություն և գրաֆիկական ներկայացում՝ էխոգենություն, արագություն կամ էներգիա;
- 10 հետաքրքրության շրջանների ընտրություն՝ հյուսվածքների շարժման փոխհատուցմամբ և գունային տարբերակմամբ;

- Հաշվարկ գույնային և էներգետիկ Doppler քարտեզագրման ռեժիմների համար՝ հոսքի ինդեքս, անոթների ինդեքս;

- Հյուսվածքների շարժման փոխհատուցում:

Սրտաբանության ոլորտում տվյալների ավտոմատ քանակական վերլուծության մասնագիտացված ծրագիր. Առկա են բոլորը CV Performance Plus Bundle

- Սրտաբանական ավտոմատ չափումներ սրտի 2D պատկերների վրա՝ ձեռքով շտկման հնարավորությամբ;

- Դոպլերային սպեկտրի պարամետրերի ավտոմատ չափում՝ ձեռքով կարգավորման հնարավորությամբ

Անոթային հետազոտությունների ընթացքում հետազոտման ենթակա ծավալի դիրքի և անկյան; սանդղակի, բազային զծի դիրքի և անկյան ավտոմատ կարգավորման, ինչպես նաև հոսքի ավտոմատ օպտիմալացման հատուկ ծրագրային ապահովում: Առկա են բոլորը CV Performance Plus Bundle

- հոսքի ավտոմատ հետևում;

- Անկյան ավտոմատ ուղղում՝ հաշվի առնելով հետազոտվող ծավալի տեղաշարժը;

- Գունավոր քարտեզավորման պատուհանի դիրքի և անկյան ավտոմատ կարգավորում:

Մասնագիտացված DICOM ծրագրային մոդուլ (տպագրություն, պահպանում, ծանուցում, սարքի աշխատանքային ցուցակ եւ կառուցվածքային հաշվետվությունների գեներացում) Առկա է

Համակարգի կազմը

Առկա են բոլորը

Էլեկտրոնային միավոր մոնիտորի եւ կառավարման վահանակի հետ՝ պարտադիր, Առկա է;

Ուլտրաձայնային տվիչներ ըստ ընտրության՝ մոնոբյուրեղային, էլեկտրոնային կոնվեքս, գծային, փուլավորված / ֆազային/ սեկտորային, մատրիցային ներկերակրափողային և տրանստորակալ, մեծահասակներ, երեխաների և նորածնային;

